

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ

ԼԵՌՆԱԿԵՐՏ ՀԱՄԱՅՆՔԻ

2017-2021 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ

ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀՆԳԱՄՅԱ

ԾՐԱԳԻՐ

Մշակվել է՝ համայնքի ղեկավարին կից գործող համայնքի զարգացման ծրագրի և տարեկան բյուջեի կառավարման գծով խորհրդակցական մարմնի կողմից

Ներկայացվել է՝ համայնքի ղեկավար Մ. Մովսիսյանի կողմից

Հաստատվել է՝ համայնքի ավագանու 19.12.2016թ. թիվ 33-Ն որոշմամբ

ԼԵՌՆԱԿԵՐՏ 2016թ.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ	2
1. ՀԱՄԱՅՆՔԻ ԻՐԱՎԻՃԱԿԻ ԲՆՈՒԹԱԳՐՈՒՄ, ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԳՆԱՀԱՏՈՒՄ. 4	
2. ՀԱՄԱՅՆՔԻ ՏԵՍԼԱԿԱՆԻ, ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԶՀԾ-Ի ՀԻՄՆԱԿԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԻ ՍԱՀՄԱՆՈՒՄ	19
3. ՀԱՄԱՅՆՔԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԻՐԱՎԻՃԱԿԻ ՎԵՐԼՈՒԾՈՒՄ, ԳՆԱՀԱՏՈՒ Մ ԵՎ ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄ.....	20
4. ՀԱՄԱՅՆՔԻ ՈԼՈՐՏԱՅԻՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՑԱՆԿԻ ԿԱԶՄՈՒՄ ԵՎ ԱՌԱՋԱՀԵՐԹՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՍԱՀՄԱՆՈՒՄ, ՖԻՆԱՆՍԱՊԵՍ ԱՊԱՀՈՎՎԱԾ ԾՐԱԳՐԵՐԻ ՁԵՎԱԿԵՐՊՈՒՄ ԵՎ ԱՍՓՈՓՈՒՄ, ԼՐԱՑՈՒՑԻՉ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՀԱՅԹԱՅԹՄԱՆ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄ	25
ՀԱՎԵԼՎԱԾ 1. ԼԵՌՆԱԿԵՐՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՈՒՄ ԵՎ ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄ.....	30
ՀԱՎԵԼՎԱԾ 2. ԼԵՌՆԱԿԵՐՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ԳՈՒՅՔԻ ՑԱՆԿԸ ԵՎ ՎԻՃԱԿԸ	32
ՀԱՎԵԼՎԱԾ 3. ԼԵՌՆԱԿԵՐՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՆԱԿԱՎԱՅՐՈՒՄ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ԱՌԿԱՅՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՎԻՃԱԿԸ..	33
ՀԱՎԵԼՎԱԾ 4. ԼԵՌՆԱԿԵՐՏ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԳՈՐԾՈՂ ՈՉ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԵՆԹԱԿԱՅՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ.....	33
ՀԱՎԵԼՎԱԾ 5. ԼԵՌՆԱԿԵՐՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՀՈՂԱՅԻՆ ՀԱՇՎԵԿՇԻՈՆ.....	33
ՀԱՎԵԼՎԱԾ 6. ԼԵՌՆԱԿԵՐՏ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԱՌԿԱ ԱՆԱՄՆԱԳԼԽԱՔԱՆԱԿԻ ՏՎՅԱԼՆԵՐՆ	34
ՀԱՎԵԼՎԱԾ 7. ԼԵՌՆԱԿԵՐՏ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԱՌԿԱ՝ՀԱՄԱՅՆՔԱԲՆԱԿՆԵՐԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՆԿԱՐԱԳԻՐՆ ՈՒ ՔԱՆԱԿՆԵՐՆ	34
ՀԱՎԵԼՎԱԾ 8. ԼԵՌՆԱԿԵՐՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՐՏԱԴՐԱԿԱՆ, ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԵՎ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՄԱՏՈՒՑՈՂ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ	35

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

ՀՀ Շիրակի մարզի Լեռնակերտ համայնքի 2016-2020 թթ. զարգացման հնգամյա ծրագիրը (այսուհետ՝ ՀՀՀԾ) մշակելիս հաշվի է առնվել, որ համաձայն 2015 թվականի դեկտեմբերի 6-ին փոփոխված ՀՀ Սահմանադրության 181-րդ հոդվածի, ՏԻՄ-երը՝ համայնքի ավագանին և համայնքի ղեկավարը, ընտրվում են հինգ տարի ժամկետով, և 210-րդ հոդվածի, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքը պետք է համապատասխանեցվի Սահմանադրությանը և ուժի մեջ մտնի 2017 թվականի հունվարի 1-ից: Հաշվի առնելով այդ պահանջները՝ մշակվել է համայնքի զարգացման ոչ թե քառամյա, այլ հնգամյա ծրագիր:

ՀՀՀԾ-ն մշակվել է՝ հիմք ընդունելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքով սահմանված՝ տեղական ինքնակառավարման մարմինների իրավասություններն ու լիազորությունները նրանց գործունեության բնագավառներում (ոլորտներում), ՀՀՀԾ-ի մշակման և կառավարման վերաբերյալ համապատասխան հոդվածների դրույթները:

Ներկայացվող ՀՀՀԾ-ն առաջիկա հինգ տարիների համար հանդիսանալու է Լեռնակերտ համայնքի զարգացման հիմնական փաստաթղթերից մեկը: ՀՀՀԾ-ի բովանդակությունը պայմանավորված է ՀՀՀԾ-ի մշակմանը համայնքի կողմից կատարված աշխատանքով և առաջարկներով, համայնքի ռեսուրսային (մարդկային, գույքային, ֆինանսատնտեսական, տեխնիկական և այլ) հնարավորություններով, համայնքային ծրագրերի իրականացման և ծառայությունների մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական միջոցների և ենթակառուցվածքների առկայությամբ: Ելնելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի պահանջներից, համայնքի ղեկավարը՝ համայնքի աշխատակազմի և համայնքի ղեկավարին կից գործող տարեկան բյուջեի ու ՀՀՀԾ-ի մշակման խորհրդակցական մարմնի(ԽՄ) հետ միասին մշակել է համայնքի 2016-2020թթ. ՀՀՀԾ-ն, որը քննարկվել և հաստատվել է համայնքի ավագանու կողմից և դրվել է գործողության մեջ:

Համայնքի 2016-2020թթ. ՀՀՀԾ-ն ներկայացնում է Լեռնակերտ համայնքի սոցիալ-տնտեսական իրավիճակի համալիր վերլուծության և առկա հիմնա խնդիրների բացահայտման, ֆինանսական և տնտեսական ռեսուրսների գնահատման արդյունքում նպատակային զարգացման տեսանկյունից ձեռնարկվելիք քայլերի ամբողջություն, որը նախատեսում է ռազմավարական քաղաքականությամբ համայնքի խնդիրների արդյունավետ լուծում և նպատակային բյուջետավարման գործընթացի իրականացում: ՀՀՀԾ-ն ներառում է նաև Լեռնակերտ համայնքի ղեկավարի և ավագանու անդամների նախընտրական ծրագրերի բաղադրիչները: Այն Լեռնակերտ համայնքի ներդաշնակ և համաչափ զարգացման, Լեռնակերտի բնակիչների բարեկեցության ապահովման համար առաջիկա հինգ տարիներին ընդունված ծրագիր է, որը հանդիսանալու է համայնքի ամենօրյա փաստաթուղթը:

ՀՀՀԾ-ի և տարեկան բյուջեի կառավարման խորհրդակցական մարմինը, փաստաթուղթը մշակելիս, հատուկ ուշադրություն է դարձրել և ձգտել, որպեսզի այն հնարավորինս համահունչ լինի գործողության մեջ դրված ՀՀ ռազմավարական, մարզային և տարածաշրջանային զարգացման ծրագրերին՝ ակնկալելով ՀՀ պետական կառավարման մարմինների, քաղաքացիական հասարակության և մասնավոր հատվածի կազմակերպությունների հետ լիակատար փոխըմբռնում ՀՀՀԾ-ում ներկայացված խնդիրների առնչությամբ և արդյունավետ համագործակցություն դրանց լուծման գործում:

ՀՀՀԾ-ի 1-ին բաժնում ներկայացվում է համայնքի սոցիալ-տնտեսական ընդհանուր և ոլորտային փաստացի իրավիճակի և համայնքի կողմից մատուցվող ծառայությունների բնութագրումը և վերլուծությունը: Բաժնում ներառվել է նաև համայնքի ՈւԹՀՎ-վերլուծությունը՝ հիմնվելով համայնքի իրավիճակի վերլուծության ու գնահատման արդյունքների վրա և ձևակերպելով համայնքի ուժեղ և թույլ կողմերը, զարգացման ներքին ու արտաքին հիմնական հնարավորությունները, համայնքին սպառնացող հիմնական վտանգները:

ՀՀՀԾ-ի 2-րդ բաժնում սահմանվում են համայնքի երկարաժամկետ տեսլականը, թե ինչպիսին ենք ցանկանում տեսնել մեր համայնքը ապագայում, ռազմավարությունը և ՀՀՀԾ-ի հիմնական նպատակները:

ՀՀՀԾ-ի 3-րդ բաժնում ներկայացվում են պետության և միջազգային դոնոր կազմակերպությունների հետ համայնքում գալիք հինգ տարիների ընթացքում նախատեսվող (շարունակվող) համագործակցության ուղղությունները:

ՀՀՀԾ-ի 4-րդ բաժնում ներկայացվում են համայնքի ֆինանսական վիճակի վերլուծությունը, գնահատումը և կանխատեսումը՝ ըստ համայնքի բյուջեի եկամտային ուղղությունների (սեփական եկամուտներ, պաշտոնական տրանսֆերտներ, փոխառու միջոցներ)՝ դիտարկելով նախորդ երկու և գալիք հինգ տարիների եկամտային ցուցանիշները:

ՀՀՀԾ-ի 5-րդ բաժնում ներկայացված են համայնքի զարգացման ծրագրերը: Դրանք գնահատվել են ըստ սահմանված չափորոշիչների և սահմանվել են առաջնահերթություններ: Ամփոփ ձևով ներկայացվել են առաջնահերթ այն ծրագրերը, որոնք մոտավոր հաշվարկներով ակնկալվում է, որ հնարավոր կլինի իրականացնել կանխատեսվող ֆինանսական միջոցներով: Գալիք հինգ տարիների ընթացքում իրականացման ենթակա ծրագրերը ձևակերպվել են՝ օգտագործելով ծրագրերի կազմման օրինակելի ձևը, ինչպես նաև ներկայացնելով ծրագրերի ֆինանսավորման աղբյուրները (համայնք իբյուջե, ՀՀ պետական բյուջե, դոնոր կազմակերպություններ, այլ) և դրանց մոտավոր արժեքներն՝ ըստ գալիք հինգ տարիների:

ՀՀՀԾ-ի 6-րդ բաժնում ներկայացվում է համայնքի սեփականություն համարվող շենքերի ու շինությունների, հողամասերի կառավարման (օտարման, վարձակալության տրամադրման) հնգամյա ծրագիրը:

ՀՀՀԾ-ի 7-րդ բաժնում ներկայացվում է ՀՀՀԾ-ի իրականացումը, մշտադիտարկումը (մոնիթորինգը) և գնահատումը, վերահսկումը և վերանայումը:

ՀՀՀԾ-ի եզրափակում բաժնում ներկայացվում են համառոտ մոտեցումներ՝ ՀՀՀԾ-ի իրականացման, վերահսկման և գնահատման, ծրագրերի իրականացման արդյունքների քննարկման, ՀՀՀԾ-ում փոփոխությունների և (կամ) լրացումների կատարման գործընթացների վերաբերյալ:

ՀՀՀԾ-ի հավելվածներ բաժնում ներկայացվում է մանրամասն և լայնածավալ տեղեկատվություն տարբեր հարցերի վերաբերյալ, ինչպիսիք են համայնքի հիմնական ցուցանիշների՝ գալիք հինգ տարիների կտրվածքով գնահատում և կանխատեսում, համայնքի ոլորտային ծրագրերի՝ ըստ ծրագրերի օրինակելի ձևի ձևակերպումներ և այլն:

1. ՀԱՄԱՅՆՔԻ ԻՐԱՎԻՃԱԿԻ ԲՆՈՒԹԱԳՐՈՒՄ, ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԳՆԱՀԱՏՈՒՄ

1.1 ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ԴԻՐՔԸ, ՊԱՏՄԱԿԱՆ ՀԱՄԱՌՈՏ ԱԿՆԱՐԿ

ՀՀ Շիրակի մարզի Արթիկի տարածաշրջանի Լեռնակերտ համայնքը հիմնադրվել է 1830 թվականներին : Ազգաբնակչության հիմնական մասը տեղափոխվել է Արևմտյան Հայաստանի Ալաշկերտ և Մուշ գավառներից : Գյուղի նախկին անվանումը եղել է Սիրվանջյուղ, 1956 թ. վերանվանվել է Լեռնակերտ:

Ներկայումս պահպանվել է եկեղեցին՝ կառուցված 4-5 ռդ դարերում , որը հիմնավերանորոգվել է 2004թ.-ին բեյրութահայ բարերար Գոհար Խաչատրյանի միջոցներով: 2006 թ.-ին համայնքի նախկին բնակիչ բարերար Գագիկ Հովհաննիսյանի միջոցներով կառուցվել է մատուռ: 2005 թ.-ին համայնքի բյուջեի միջոցներով կառուցվել է Մեծ Եղեռնի զոհերի , հայրենական Մեծ պատերազմի զոհերի հիշատակին նվիրված հուշարձաններ : 2011 թ.-ին համայնքի բյուջեի միջոցներով կառուցվել է Արցախյան ազատամարտի հերոսներին նվիրված հուշարձան կոթող: Հմնադրված օրվանից համայնքում հիմնականում բնակվել են հայեր : Համայնքը ակտիվ մասնակցություն է ունեցել 2-րդ համաշխարհային պատերազմին :

Համայնքի բնակչությունը աչք է ընկնում բարձրագույն կրթություն ունեցողների քանակով , որի արդյունքն է նաև յուրաքանչյուր տարի համայնքից բարձրագույն ուսումնական հաստատություններ ընդունվողների թիվը: Լեռնակերտը գտնվում է Արագած Լեռան ստորոտում, ծովի մակարդակից 2017 մ. բարձրության վրա, Արթիկ քաղաքից 10 կմ. , մարզկենտրոնից 35 կմ., մայրաքաղաքից 120 կմ. հեռավորության վրա : Արթիկի տարածաշրջանի ծայրամասային, բարձր լեռնային գյուղերից է և մյուս համայնքների հետ կապը ապահովվում է միակ միջհամայնքային ճանապարհով, որի երկարությունը 4 կմ. է : Տարվա եղանակների բաշխվածությունը անհամաչափ է : Ձմռան տևողությունը մոտ 6 ամիս է և ցուրտ : Խիստ կարճատև են գարունը և ամառը, համեմատաբար լավ է աշունը: Տարեկան տեղումների քանակը 1800-2000մմ է :

Համայնքի տարածքը գտնվում է Լեռնատափաստանային ենթագոտում, տարածքի ռելիեֆը հիմնականում լեռնային է կտրտված ձորակների լայն ցանցով:

Ըստ հանրապետության տարաշքի կադաստրային շրջանցման , գյուղը գտնվում է Ապարան-Հրազդան գնահատման շրջանում, իսկ ագրո- կլիմայական շրջանցմամբ՝ Շիրակի չափավոր ցուրտ , խոնավությամբ թույլ ապահովված գոտում:

Համայնքը հյուսիսից սահմանակից է Պենզաշեն , հարավից Սառնաղբյուր , արևմուտքից Ձորակապ համայնքների վարչական տարածքներին:

Բնակչությունը հիմնականում զբաղվում է անասնապահությամբ և հողագործությամբ, որը հանդիսանում է նրանց եկամուտի աղբյուրը: Մեծ է նաև արտագնա աշխատանքի մեկնողների թիվը:

1.2 ԺՈՂՈՎՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Լեռնակերտ համայնքի բնակչությունը 2016թ. հունվարի 1-ի դրությամբ կազմում է 1541 մարդ:

Համայնքի առկա բնակչության թիվը կազմում է 1510 մարդ, այդ թվում տղամարդիկ՝ 808 և կանայք՝ 702:

Հ/հ	Ցուցանիշները	Ընդամենը համայնք
1.	Առկա բնակչության թիվը, այդ թվում՝	1510
	Տղամարդիկ	808
	Կանայք	702
	0-4 տարեկան	87
	5-6 տարեկան	39
	7-10 տարեկան	54
	11-14 տարեկան	78
	15-17 տարեկան	69
	18-22 տարեկան	106
	23-45 տարեկան	209
	46-62 տարեկան	182
	63 և բարձր տարիքի	173
2.	Կենսաթոշակառուներ, այդ թվում՝	203
	Տարիքային և աշխատանքային	84
3.	Փախստականներ	0
4.	Միակողմանի ծնողագուրկ երեխաներ	16
5.	Երկկողմանի ծնողագուրկ երեխաներ	0
6.	Հայրենական մեծ պատերազմի մասնակիցներ	1
7.	Արցախյան պատերազմի մասնակիցներ	3
8.	Հաշմանդամներ, այդ թվում՝	90
	Մանկուց հաշմանդամներ	9
9.	Աշխատունակներ	81
10.	Զբաղվածներ	780
11.	Գործազուրկներ	0
13.	Ընտանեկան նպաստների պետական համակարգում գրանցված ընտանիքների թիվը	75
14.	Արցախյան պատերազմում զոհվածների ընտանիքների թիվը	1
15.	Բնակարանի կարիքավոր	5

	ընտանիքների թիվը, այդ թվում՝	
	Անօթևան ընտանիքներ	3
16.	Բնակարանային պայմանների բարելավման կարիք ունեցող ընտանիքների թիվը	189
17.	Արտագնա աշխատանքի մեկնող ունեցող տնային տնտեսությունների թիվը	295
18.	Արտագնա (սեզոնային) աշխատանքի մեկնողների թիվը	523

1.3 ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԸ


Լեռնակերտ համայնքում տեղական ինքնակառավարումն իրականացնում են ընտրությունների արդյունքում ձևավորված տեղական իշխանությունները՝ համայնքի ղեկավարն ու համայնքի ներկայացուցչական մարմինը՝ ավագանին իր 7 անդամներով (ընտրված Լեռնակերտ համայնքի բնակավայրից): Լեռնակերտ համայնքի աշխատակազմը բաղկացած է 9 աշխատակցից:

Համայնքապետարանն ունի վարչական շենք, որը գտնվում է Լեռնակերտ համայնքի կենտրոնում: Շենքի ընդհանուր վիճակը լավ է, աշխատակազմի համար պայմանները լավ են, կահավորանքի մի մասը նորացված է, մի մասը դեռևս 1980-ական թվականներից է: Համայնքապետարանը հագեցած է տեխնիկայով: Համայնքի ղեկավարի վարձատրության չափը, համայնքի աշխատակազմի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային նորոգչաչափերը հաստատվել են համայնքի ավագանու 2015 թվականի դեկտեմբերի 16-ի թիվ 23-Ն որոշմամբ (աղյուսակ):

Աղյուսակ 1. Լեռնակերտ համայնքի աշխատակազմը

Հ/հ	Պաշտոնի անվանումը (համայնքային ծառայության պաշտոնների մասովն ան ծածկագիրը)	Հաստիքների քանակը	Հաստիքային միավորը	Պաշտոնային դրույքաչափը (ՀՀ դրամ)
ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՎ ՀԱՅԵՑՈՂԱԿԱՆ ՊԱՇՏՈՆՆԵՐ				
1.	Համայնքի ղեկավար	1	1	240000
2.	Համայնքի ղեկավարի տեղակալ	1	1	150000
3.				
ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՈՆՆԵՐ				
4.	Աշխատակազմի քարտուղար (1.2-1)	1	1	160000
5.	Առաջատար մասնագետ-հաշվապահ (3.1-1)	1	1	154000
ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՄԱՏՈՒՑՈՂ ԵՎ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՊԱՍԱՐԿՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՅՆՈՂ ԱՆՁՆԱԿԱԶՄ				
6.	Համակարգչային օպերատոր	1	1	140000
7.	Հարկային գործակալ	1	1	140000
8.	Գրադարանավար	1	1	90000
9.	Հավաքարար	1	1	90000
	Ընդամենը	9	9	1073500

Գծապատկեր 1-ում ներկայացված է Լեռնակերտ համայնքի աշխատակազմի կառավարման կազմակերպական կառուցվածքը:



Համայնքային ոչ առևտրային կազմակերպություն (ՀՈԱԿ) աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատվել են համայնքի ավագանու 2015 թվականի դեկտեմբերի 16-ի թիվ 23-Ն որոշմամբ (աղյուսակ 5):

Աղյուսակ 2. Շիրակի մարզի Լեռնակերտի նախադպրոցական հաստատություն համայնքային ոչ առևտրային կազմակերպություն

Հ/հ	Պաշտոնի անվանումը	Հաստիքային միավորը	Հաստիքների քանակը	Դրույքի չափը	Գումարը
1.	Տնօրեն	1	1	110000	110000
2.	հաշվապահ	1	1	90000	90000
3.	Դաստիարակ	0.5	2	86000	172000
4.	երաժշտության ղեկավար	1	1	86000	86000
5.	Դաստիարակի օգնական	1	1	84000	84000
6.	Խոհարար	1	1	84000	84000
7.	բակապահ դռնապան	1	1	84000	84000
	Ընդամենը		8		710000

1.4 ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ԳՈՒՅՔԻ ՖԻԶԻԿԱԿԱՆ ՎԻՃԱԿԸ

Հավելված 2-ում բերված է 01.06.2016թ. դրությամբ համայնքի սեփականություն համարվող գույքի ցանկը և վիճակը:

1.5 ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԿՈՄՈՒՆԱԼ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Բնակավայրի բնակելի կառուցապատումն իրականացված է առանձնատներով, առանց հատակագծի: Բոլոր փողոցները հարթ են, բայց տները կառուցված են խառը շարվածքով: Լեռնակերտում տնամերձ հողամասերի միջին չափը 120 քմ է:

Փողոցներում աղբամաններ տեղադրված չեն :

Բնակավայրն ունի լուսավորության ցանց, որը կառուցված գյուղապետարանի միջոցներով: Համայնքի տարածքում գիշերային (արտաքին) լուսավորության ցանցը ապահովում է համայնքի անհրաժեշտ գիշերային լուսավորության ծածկույթի 60 %-ը: Խմելու ջրի մատակարարումը համարվում է համայնքի կարևորագույն խնդիրներից ամենաառաջնահերթը: համայնքը ապահովված է շուրջօրյա ջրամատակարարմամբ:

Բնակավայրն ունի օրական 24 ժամյա ջրամատակարարում: Գործում է խմելու ջրի երկու ՕԿՋ , որոնցից մեկը կառուցվել է 2016 թվականին գտնվում է գերազանց վիճակում , մյուսը՝ կառուցվել է 1990 թվականին և ունի վերանորոգման կարիք: Խողովակաշարի ներքին և արտաքին ցանցը գտնվում է լավ վիճակում: Սպասարկվում է գյուղապետարանի կողմից:

Բնակավայրի գերեզմանատունը պարսպապատված է և գտնվում է բարվոք վիճակում:

1.6 ՀՈՂՕԳՏԱԳՈՐԾՈՒՄ

Համայնքի վարչական տարածքը կազմում է 3220.83 հա, որից գյուղատնտեսական նշանակության հողերը կազմում են 2708.86 հա, բնակավայրերի հողերը՝ 160.73 հա,

արտադրական նշանակության հողերը՝ 7.99 հա, էներգետիկայի, տրանսպորտի և կապի, կոմունալ ենթակայության հողերը՝ 0.17 հա, անտառային հողերը՝ 264.19 հա, հատուկ պահպանության հողերը՝ 73.39 հա, հատուկ նշանակության հողերը՝ 0 հա և ջրային հողերը՝ 5.50 հա:

1991 թվականին հանրապետությունում իրականացված հողի սեփականաշնորհման ժամանակ համայնքի բնակավայրերում սեփականաշնորհված հողերի մեկ հողաբաժնի չափը 1.0 հա:

Համայնքի հողային հաշվեկշիռն ներկայացված է **հավելված 5**-ում:

1.7 ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Համայնքի սեփականաշնորհված և վարձակալությամբ տրված վարելահողերում ցանվում են հացահատիկային մշակբույսեր՝ ցորեն, գարի և այլ կուլտուրաներ: Սակայն հողատարածքների ջրովի չլինելու պատճառով համայնքաբնակները մեծ եկամուտներ չեն ստանում:

Համայնքաբնակները զբաղվում են նաև անասնապահությամբ, հիմնականում յուրաքանչյուր տնտեսություն իր արտադրանքը սպառում է իր տնտեսության ներսում: Վերջին տարիներին Լեռնակերտ բնակավայրում «Գյուղատնտեսության նախարարության գյուղատնտեսական ծրագրերի իրականացման գրասենյակ» ՊՀ-ի կողմից իրականացվել է ջրարբիացման ծրագիր, որի շնորհիվ համայնքի խոշոր և մանր եղջերավոր անասունները ապահովվել են սեզոնային արածեցման համար ջրով:

Հավելված 6-ում ներկայացված է համայնքում առկա անասնազխաքանակի վերաբերյալ տվյալներն:

1.8 ՏՐԱՆՍՊՈՐՏ, ՃԱՆԱՊԱՐՀԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Լեռնակերտ համայնքն ունի 12 կմ երկարությամբ ներհամայնքային ճանապարհ, որից 4.5 կմ. ասֆալտապատ է, 2 կմ. սալիկապատված, մնացածն ամբողջությամբ գրունտային է:

Համայնքում գործում է Գյումրի-Լեռնակերտ և Արթիկ-Լեռնակերտ երթուղիները , որով բնակչությունը իրականացնում է իր տեղաշարժը, բացի դրանից եղած սեփական ավտոմեքենաների և տաքսիների առկայությունը նպաստում է մարդկանց բնականոն տեղաշարժին:

Համայնքում կա երկաթբետոնյա 2 կամուրջ, որոնք կառուցված են հեղեղատարների հունների վրա և ունեն վերանորոգման կարիք:

Համայնքի ներբնակավայրային փողոցների և համայնքային սեփականություն հանդիսացող տրանսպորտային միջոցների վերաբերյալ տվյալները ներկայացված են **հավելված 7**-ում:

1.9 ԱՌԵՎՏՈՒՐ ԵՎ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Համայնքում գործում են հանրային սննդի խանութներ, հացի փոեր: Համայնքում չկան գործող ոչ կառավարական կազմակերպություններ (ՀԿ-ներ, հիմնադրամներ,

քաղաքական կուսակցություններ և այլն): բնակավայրերում գործում են «Արոտ օգտագործողների Լեռնակերտ 2011 սպառողական կոոպերատիվ»-ը, որը համայնքում իրականացնում է , գյուղատնտեսական աշխատանքների կազմակերպման ծառայություններ: Համայնքի տարածքում արտադրական, առևտրային և այլ ծառայություններ մատուցող կազմակերպությունների տվյալները (նաև նախկինում աշխատած) ներկայացված են **հավելված 8-ում:**

1.10 **ԿՐԹՈՒԹՅՈՒՆ**

Լեռնակերտ համայնքում գործում է միջնակարգ դպրոց, որը կառուցվել է 2002 թվականին ՀՀ Սոցներդրումների հիմնադրամի միջոցներով, նախատեսված 250 աշակերտի համար: Ուսումնական գործընթացը կազմակերպվում է մեկ հերթով: Դպրոցը ջեռուցվում է էլեկտրաէներգիայով: Համայնքում գործում է նախադպրոցական ուսումնական հաստատություն, որը աշխատում է 8 ժամյա աշխատանքային ռեժիմով, տրվում է երկանգամյա սնունդ: ՆՈՒՀ-ն ջեռուցման բացակայության պատճառով նոյեմբերից մինչև մայիսն ընկած ժամանակահատվածը չի գործում: Ավագանու որոշմամբ ՆՈՒՀ-ում ծնողական վճարի չափը սահմանված է 2000 (երկու հազար) դրամ: Աղյուսակ 13-ում ներկայացված է վերը նշված ուսումնական հաստատություններում աշխատողների և ուսուցանվող երեխաների վերաբերյալ տեղեկատվություն:

Աղյուսակ 3. Լեռնակերտ համայնքի միջնակարգ դպրոցի և նախադպրոցական ուսումնական հաստատության վերաբերյալ ցուցանիշները

Հ/հ	Ցուցանիշները	Ընդամենը համայնքում
1.	Դպրոցում աշխատողների թիվը, որից՝ Մանկավարժներ	32 19
2.	Աշակերտների թիվը	195
3.	ՆՈՒՀ-ում աշխատողների թիվը	8
4.	ՆՈՒՀ-ում հաճախող երեխաների թիվը	30

1.11 **ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ, ՖԻԶԻԿԱԿԱՆ ԿՈՒԼՏՈՒՐԱ, ՄՊՈՐՏ**

Համայնքում գործում է առողջության առաջնային պահպանության ամբուլատորիա, որը կառուցվել է 2007 թվականին „ՀՊԾ“- ով և ապահովված է առանձին շենքային պայմաններով: Բուժհաստատությունը հիմնականում իրականացնում են առաջին բուժօգնության ծառայություններ: Տեղի ունեցող հիմնական դեպքերի ժամանակ շտապ օգնությունը հասնում է Արթև քաղաքից: Բուժհաստատությունը ունի գույքի համալրման կարիք:

Համայնքում 2007 թվականին „ՎՀԱ“, ծրագրով համայնքապետարանի եկրորդ հարկը վերանորոգվել և վերակազմավորվել է որպես մարզադահլիճ: Մարզագույքի մի մասը նվիրաբերվել է համայնքի նախկին բնակիչների և ՇՀԿՄ կողմից:

Աղյուսակ 4. Լեռնակերտ համայնքի աշխատունակների և գործազուրկների, նպաստառու ընտանիքների, հաշմանդամների և ծնողազուրկ ու հաշմանդամ երեխաների վերաբերյալ ցուցանիշները

Հ/հ	Ցուցանիշները	Ընդամենը համայնք
1.	Միակողմանի ծնողազուրկ երեխաներ	12
2.	Երկկողմանի ծնողազուրկ երեխաներ	0
3.	Հաշմանդամներ, այդ թվում՝	32
4.	Մանկուց հաշմանդամներ	7
5.	Աշխատունակներ	971
6.	Զբաղվածներ	1276
7.	Գործազուրկներ	0
8.	Ընտանեկան նպաստների պետական համակարգում գրանցված ընտանիքների թիվը	75

1.12 ԲՆԱԿԻՉՆԵՐԻ ՄԱՄՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆԸ

Համայնքապետարանը ստեղծել է իր պաշտոնական վեբկայքը՝ www.lernakert.am, որի նպատակը բնակչությանը համայնքի կառավարման վերաբերյալ իրազեկումն է, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքով ամրագրված հրապարակայնության և թափանցիկության ապահովումը, տեղական իշխանություն-բնակչություն կապի ամրապնդումը և բնակչության շրջանում տեղական իշխանության նկատմամբ վստահության բարձրացումը: Համայնքապետարանում տեղադրված է տեղեկատվական ցուցատախտակ, որի միջոցով ապահովվում է համայնքի ղեկավարի և ավագանու կայացրած որոշումների հրապարակայնությունը:

Համայնքի ավագանին.

- ✓ 25.04.2016թ. N 12-Ն որոշմամբ հաստատել է «Համայնքի ղեկավարին կից խորհրդակցական մարմինների ձևավորման և գործունեության կարգը»
- ✓ 25.04..2016թ. N 13-Ն որոշմամբ հաստատել է «Համայնքում հանրային բաց լսումների և (կամ) քննարկումների կազմակերպման և անցկացման կարգը»
- ✓ 25.04.2016թ. 14-Ն որոշմամբ հաստատել է «Համայնքում տեղական ինքնակառավարմանը բնակիչների մասնակցության կարգը»:

ՀԱՄԱՅՆՔԻ ՈՒԹՀՎ-ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՈՒԺԵՂ ԿՈՂՄԵՐԸ

Համայնքի ուժեղ կողմերն են՝

- ✓ Համայնքի աշխարհագրական դիրքը ռազմավարական նշանակություն ունի.

- ✓ Պատմամշակութային ու բնական հարուստ ժառանգության առկայությունն ու մշակութային հարուստ ավանդույթները
- ✓ Լեռնակերտի 4-րդ դարի բազելիկ Սուրբ Հովհաննես եկեղեցին
- ✓ Հին բնակավայրերի գրավիչ ճարտարապետական տեսքը
- ✓ Փոքր և միջին բիզնեսում բնակչության որոշակի ներգրավվածությունը
- ✓ Գյուղատնտեսական տեխնիկայի բավարար քանակ
- ✓ Համայնքում բարձրագույն և միջնակարգ մասնագիտական կրթություն ունեցողների մեծ քանակը
- ✓ Զրային ռեսուրսների բավարար առկայությունը
- ✓ Բարոյա-հոգեբանական առողջ մթնոլորտ
- ✓ Մարդկային և աշխատանքային ռեսուրսների բավարար առկայություն:

ՀԱՄԱՅՆՔԻ ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐԸ

Համայնքի թույլ կողմերն են՝

- ✓ Գործազրկության բարձր մակարդակը և աշխատատեղերի պակասը
 - ✓ Գյուղատնտեսական գործունեության համար պիտանի հողերի սակավություն
 - ✓ Բնակչության սոցիալ-տնտեսական պայմանների ցածր մակարդակ:
 - ✓ Գյուղատնտեսական մթերքների իրացման դժվարություններ:

ՀԱՄԱՅՆՔԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՄԻՏՈՒՄՆԵՐԸ

Լեռնակերտի տարածքային և տնտեսական զարգացման գործում կարևոր է հաշվի առնել համայնքի բնակչության հեռանկարային աճը, որը ելնում է համայնքի հեռանկարային տարածքային զարգացման հաշվարկված հնարավորություններից: Ընդ որում աճի տեմպերի համար ժամկետներ չեն կանխատեսվում, քանի որ այն կախված է հանրապետության ընդհանուր տնտեսական զարգացման տեմպից, քաղաքական իրավիճակից, բնակչությանը աշխատատեղերով ապահովելու մակարդակից:

Լեռնակերտ համայնքում աշխատատեղերի մեծ քանակ կարելի է ակնկալել բնական ռեսուրսների, հիմնականում հումքային, սպասարկման ոլորտի, գյուղատնտեսության հնարավորությունները ռացիոնալ օգտագործելով: Զարգացման հիմնական ուղղությունների իրականացման գործընթացում խիստ կարևորվում է տեղական իշխանությունների, համայնքի բնակչության, քաղաքացիական հասարակության, լրատվամիջոցների և գործարարների համատեղ գործունեությունը, ինչպես նաև համագործակցությունը պետության և դոնոր կազմակերպությունների հետ:

2. ՀԱՄԱՅՆՔԻ ՏԵՍԼԱԿԱՆԻ, ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԶՀԾ-Ի ՀԻՄՆԱԿԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԻ ՍԱՀՄԱՆՈՒՄ

Համայնքի տեսլականն է՝

Լեռնակերտը բնակչությանը որակյալ ծառայություններ մատուցող և սոցիալ – փոփոխական բնականոն զարգացում ապահովող համայնք է, որտեղ ստեղծված է

ներդրումների համար մրցունակ միջավայր, իսկ բնակիչներն ապրում են բարեկեցիկ կյանքով:

Նշված տեսլականին հասնելու համար համայնքը որդեգրել է հետևյալ **ռազմավարությունը՝**

- ✓ Ապահովել համայնքի համամասնական զարգացումը
- ✓ Տարեցտարի բարելավել համայնքի ֆինանսական դրությունը՝ իրականացնելով համայնքի բյուջեի հարկային եկամուտների գանձման, ոչ հարկային եկամուտների, տեղական տուրքերի ու վճարների սահմանման և գանձման արդյունավետ քաղաքականություններ
- ✓ Նպաստել համայնքում աշխատատեղերի ընդլայնմանը՝ ռացիոնալ օգտագործելով բնական ռեսուրսները, զարգացնելով առևտրի և սպասարկման ոլորտն ու գյուղատնտեսությունը
- ✓ Բարձրացնել բնակչության կենսամակարդակը՝ ընդլայնելով մատուցվող հանրային ծառայությունների որակն ու շրջանակը

Համայնքի զարգացման 2016-2020թթ. հնգամյա ծրագրի հիմնական **նպատակներն** են՝

- ✓ Ունենալ բարեկարգ և լուսավոր ներհամայնքային ճանապարհներ և փողոցներ
- ✓ Բարձրացնել նախադպրոցական կրթության ոլորտում մատուցվող ծառայությունների որակը
- ✓ Ունենալ մաքուր շրջակա միջավայրով համայնք՝ չխախտելով բնության և շրջակա միջավայրի սանիտարահիգիենիկ վիճակը, խուսափել հիվանդություններից և համաճարակներից
- ✓ Ակտիվացնել համայնքի մշակութային կյանքը
- ✓ Արդյունավետ օգտագործել ոռոգման ջրի պաշարները
- ✓ Նպաստել գյուղատնտեսական աշխատանքների հեշտացմանը՝ ունենալով հարթեցված դաշտամիջյան ճանապարհներ

3. ՀԱՄԱՅՆՔԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԻՐԱՎԻՃԱԿԻ ՎԵՐԼՈՒԾՈՒՄ, ԳՆԱՀԱՏՈՒՄ ԵՎ ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄ

Համայնքի բյուջեի մուտքերը, կարելի է ասել, ձևավորվում են բացառապես վարչական բյուջեի միջոցների հաշվին: Համայնքում գալիք հինգ տարիներից միայն 2019թ. է նախատեսվում ոչ ֆինանսական ակտիվների իրացումից մուտքերի ստացում, այն էլ փոքր գումարի չափով: Վարչական բյուջեի եկամուտները ձևավորվում են սահմանափակ թվով եկամտատեսակների՝ հարկերի, տեղական տուրքերի և գույքի վարձակալությունից եկամուտների հաշվին: Համայնքի բյուջեի կանխատեսվող եկամուտների մեծ մասը (2016թ.՝ 81.4%, 2017թ.՝ 81.6%, 2018թ.՝ 80.1%, 2019թ.՝ 80.3%, 2020թ.՝ 80.9%,) ձևավորվում են պետական բյուջեից համայնքներին տրամադրվող ֆինանսական համահարթեցման դոտացիաների հաշվին(աղյուսակ 15):

Քանի որ համայնքի բյուջեի ֆոնդային մասում մուտքեր գրեթե չեն կանխատեսվում, ապա պլանավորվող հինգ տարիների կապիտալ ծախսերը մեծամասամբ կիրականացվեն համայնքի բյուջեի վարչական մասի պահուստային ֆոնդից ֆոնդային բյուջե կատարվող հատկացումների և տարեսկզբի ազատ մնացորդի հաշվին:

**Աղյուսակ 5. Համայնքի 2014-2015թթ. բյուջեների մուտքերի ցուցանիշները և 2016-2020թթ. բյուջեների մուտքերի կանխատեսումը
հազար դրամ**

Հ/հ	Մուտքերի անվանումը	2014թ. փաստ.	2015թ. փաստ.	2016թ. նախ.	2017թ. կանխ.	2018թ. կանխ.	2019թ. կանխ.	2020թ. կանխ.
	ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՄՈՒՏՔԵՐ՝ ԸՆԴԱՄԵՆԸ (I+II+III)*	29051.1	32520.7	33691.1	34674.2	35793.8	36923.9	37673.9
I.	ԸՆԴԱՄԵՆԸ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ (1+2+3)*	28817.7	32401.6	33637.6	34730.2	35243.8	36323.9	37223.9
1	ՀԱՐԿԵՐ ԵՎ ՏՈՒՐՔԵՐ	4068.8	4352.3	4490.0	4862.9	4932.5	5052.5	5102.5
1.1	Գույքային հարկեր անշարժ գույքից	2008.8	1974.6	1950.0	2018.9	2002.5	2002.5	2002.5
	Գույքահարկ շենքերի և շինությունների համար				18.9	2.5	2.5	2.5
	Հողի հարկ	2008.8	1974.6	1950.0	2000.0	2000.0	2000.0	2000.0
1.2	Գույքային հարկեր այլ գույքից	2035.0	2337.7	2500.0	2820.0	2850.0	2950.0	3000.0
	Գույքահարկ փոխադրամիջոցների համար	2035.0	2337.7	2500.0	2820.0	2850.0	2950.0	3000.0
1.3	Ապրանքների օգտագործման կամ գործունեության իրականացման թույլտվության վճարներ	25.0	40.0	40.0	24.0	80.0	100.0	100.0
	Տեղական տուրքեր	25.0	40.0	40.0	24.0	80.0	100.0	100.0
1.4	Ապրանքների մատակարարումից և ծառայությունների մատուցումից այլ պարտադիր վճարներ							
	Պետական տուրքեր							
1.5	Այլ հարկային եկամուտներ							
	Այլ հարկերից և պարտադիր վճարներից կատարվող մասհանումներ							
	Հողի հարկի և գույքահարկի գծով համայնքի բյուջե վճարումների բնագավառում բացահայտված հարկային օրենսդրության խախտումների համար հարկատուներից գանձվող տույժեր և տուգանքներ, որոնք չեն հաշվարկվում այդ հարկերի գումարների նկատմամբ							
2	ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԴՐԱՄԱՇՆՈՐՀՆԵՐ	23500.2	26837.8	27807.6	28189.9	28689.9	29650.0	30500.0
2.1	Ընթացիկ արտաքին պաշտոնական դրամաշնորհներ							
2.2	Կապիտալ արտաքին պաշտոնական դրամաշնորհներ							
2.3	Ընթացիկ ներքին պաշտոնական դրամաշնորհներ	23500.2	26837.8	27807.6	28189.9	28689.9	29650.0	30500.0
ա)	Պետական բյուջեից ֆինանսական համահարթեցման սկզբունքով տրամադրվող	23415.6	26260.4	27606.0	28189.9	28689.9	29300.0	30000.0

	դրոտացիաներ							
բ)	Պետական բյուջեից տրամադրվող այլ դրոտացիաներ		177.4	201.6			350.0	500.0
գ)	Պետական բյուջեից տրամադրվող նպատակային հատկացումներ (սուբվենցիաներ)	84.6						
դ)	ՀՀ այլ համայնքների բյուջեներից ընթացիկ ծախսերի ֆինանսավորման նպատակով ստացվող պաշտոնական դրամաշնորհներ							
2.4	Կապիտալ ներքին պաշտոնական դրամաշնորհներ		400.0					
ա)	Պետական բյուջեից կապիտալ ծախսերի ֆինանսավորման նպատակային հատկացումներ (սուբվենցիաներ)		400.0					
բ)	ՀՀ այլ համայնքներից կապիտալ ծախսերի ֆինանսավորման նպատակով ստացվող պաշտոնական դրամաշնորհներ							
3	ԱՅԼ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ*	1248.7	1211.5	1340.0	1621.4	1621.4	1621.4	1621.4
3.1	Տոկոսներ							
3.2	Շահաբաժիններ							
3.3	Գույքի վարձակալությունից եկամուտներ	1248.7	1211.5	1340.0	1591.4	1591.4	1591.4	1591.4
	Համայնքի սեփականություն համարվող հողերի վարձակալության վարձավճարներ	1226.7	1199.5	650.0	782.9	782.9	782.9	782.9
	Համայնքի վարչական տարածքում գտնվող պետական սեփականություն համարվող հողերի վարձակալության վարձավճարներ			680.0	758.5	758.5	758.5	758.5
	Համայնքի վարչական տարածքում գտնվող պետության և համայնքի սեփականությանը պատկանող հողամասերի կառուցապատման իրավունքի դիմաց գանձվող վարձավճարներ							
	Այլ գույքի վարձակալությունից մուտքեր	22.0	12.0	10.0	50.0	50.0	50.0	50.0
3.4	Համայնքի բյուջեի եկամուտներ ապրանքների մատակարարումից և ծառայությունների մատուցումից, այդ թվում							
	Պետության կողմից ՏԻՄ-երին պատվիրակված լիազորությունների իրականացման ծախսերի ֆինանսավորման համար պետական բյուջեից ստացվող միջոցներ							
3.5	Վարչական գանձումներ				30.0	30.0	30.0	30.0
	Տեղական վճարներ				30.0	30.0	30.0	30.0

	Համայնքի վարչական տարածքում ինքնակամ կառուցված շենքերի, շինությունների օրինականացման համար վճարներ							
	Օրենքով սահմանված դեպքերում համայնքային հիմնարկների կողմից առանց տեղական տուրքի գանձման մատուցվող ծառայությունների կամ կատարվող գործողությունների դիմաց ստացվող (գանձվող) վճարներ							
3.6	Մուտքեր տույժերից, տուգանքներից							
	Վարչական իրավախախտումների համար ՏԻՄ-երի կողմից պատասխանատվության միջոցների կիրառումից եկամուտներ							
	Մուտքեր համայնքի բյուջեի նկատմամբ ստանձնած պայմանագրային պարտավորությունների չկատարման դիմաց գանձվող տույժերից							
3.7	Ընթացիկ ոչ պաշտոնական դրամաշնորհներ							
3.8	Կապիտալ ոչ պաշտոնական դրամաշնորհներ							
3.9	Այլ եկամուտներ*							
	Համայնքի գույքին պատճառած վնասների փոխհատուցումից մուտքեր							
	Վարչական բյուջեի պահուստային ֆոնդից ֆոնդային բյուջե կատարվող հատկացումներից մուտքեր							
	Օրենքով և իրավական այլ ակտերով սահմանված՝ համայնքի բյուջեի մուտքագրման ենթակա այլ եկամուտներ							
II.	ՈՉ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱԿՏԻՎՆԵՐԻ ԻՐԱՑՈՒՄԻՑ ՄՈՒՏՔԵՐ (1+2+3+4)							
1	Հիմնական միջոցների իրացումից մուտքեր							
	Անշարժ գույքի իրացումից մուտքեր							
	Շարժական գույքի իրացումից մուտքեր							
	Այլ հիմնական միջոցների իրացումից մուտքեր							
2	Պաշարների իրացումից մուտքեր							
3	Բարձրարժեք ակտիվների իրացումից մուտքեր							
4	Չարտադրված ակտիվների իրացումից մուտքեր							
	Հողի իրացումից մուտքեր							

	Ոչ նյութական չարտադրված ակտիվների իրացումից մուտքեր							
III.	ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵՐԻ ՀԱՎԵԼՈՒՐԴԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՄ ՊԱԿԱՍՈՒՐԴԻ (ԴԵՖԻՑԻՏԻ) ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԸ (Ա+Բ)	233.4	119.1	53.5	400.0	550.0	600.0	450.0
Ա.	ՆԵՐՔԻՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ (1+2)	233.4	119.1	53.5	400.0	550.0	600.0	450.0
1	ՓՈԽԱՌՈՒ ՄԻՋՈՑՆԵՐ							
1.1	Արժեթղթեր							
	-թողարկումից և տեղաբաշխումից մուտքեր							
	-հիմնական գումարի մարում							
1.2	Վարկեր							
	-վարկերի ստացում							
	-ստացված վարկերի հիմնական գումարի մարում							
1.3	Փոխատվություններ							
	-բյուջետային փոխատվությունների ստացում							
	-ստացված փոխատվությունների գումարի մարում							
2	ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱԿՏԻՎՆԵՐ	233.4	119.1	53.5	400.0	550.0	600.0	450.0
2.1	Բաժնետոմսեր և կապիտալում այլ մասնակցություն							
	-համայնքային սեփականության բաժնետոմսերի և կապիտալում համայնքի մասնակցության իրացումից մուտքեր							
	-իրավաբանական անձանց կանոնադրական կապիտալում պետական մասնակցության, պետական սեփականություն հանդիսացող անշարժ գույքի (բացառությամբ հողերի), այդ թվում՝ անավարտ շինարարության օբյեկտների մասնավորեցումից առաջացած միջոցներից համայնքի բյուջե մասհանումից մուտքեր							
	-բաժնետոմսեր և կապիտալում այլ մասնակցություն ձեռքբերում							
2.2	Փոխատվություններ							
	-նախկինում տրամադրված փոխատվությունների դիմաց ստացվող մարումներից մուտքեր							
	-փոխատվությունների տրամադրում							
2.3	Համայնքի բյուջեի միջոցների տարեսկզբի ազատ մնացորդը	233.4	119.1	53.5	400.0	550.0	600.0	450.0
2.4	Համայնքի բյուջեի ֆոնդային մասի ժամանակավոր ազատ միջոցների տրամադրում վարչական մաս							
2.5	Համայնքի բյուջեի ֆոնդային մասի ժամանակավոր ազատ միջոցներից վարչական մաս տրամադրված միջոցների							

	վերադարձ ֆոնդային մաս							
2.6	Համայնքի բյուջեի հաշվում միջոցների մնացորդները հաշվետու ժամանակահատվածում							
	որից՝ ծախսերի ֆինանսավորմանը չուղղված համայնքի բյուջեի միջոցների տարեսկզբի ազատ մնացորդի գումարը							
Բ.	ԱՐՏԱՔԻՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ							
1	ՓՈԽԱՌՈՒ ՄԻՋՈՑՆԵՐ							
1.1	Արժեթղթեր							
	-թողարկումից և տեղաբաշխումից մուտքեր							
	-հիմնական գումարի մարում							
1.2	Վարկեր							
	-վարկերի ստացում							
	-ստացված վարկերի հիմնական գումարի մարում							
1.3	Փոխատվություններ							
	-փոխատվությունների ստացում							
	-ստացված փոխատվությունների գումարի մարում							

4. ՀԱՄԱՅՆՔԻ ՈԼՈՐՏԱՅԻՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՑԱՆԿԻ ԿԱԶՄՈՒՄ ԵՎ ԱՌԱՋՆԱՀԵՐԹՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՍԱՀՄԱՆՈՒՄ, ՖԻՆԱՆՍԱՊԵՍ ԱՊԱՀՈՎՎԱԾ ԾՐԱԳՐԵՐԻ ՁԵՎԱԿԵՐՊՈՒՄ ԵՎ ԱՄՓՈՓՈՒՄ, ԼՐԱՅՈՒՑԻՉ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՀԱՅԹԱՅԹՄԱՆ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՅՈՒՄ

Ելնելով համայնքի իրավիճակի վերլուծության և գնահատման արդյունքներից, համայնքում ներկայումս արձանագրված հիմնախնդիրներից, քննարկվել և որոշվել է առաջարկվող ծրագրերի ցանկը (աղյուսակ 16)՝ ընդգրկելու համայնքի 2016-2020 թթ. ՀԶՀԾ-ում: Այդ ծրագրերի մի մասի իրականացումը համարվում է տեղական ինքնակառավարման մարմինների լիազորություն, իսկ մյուս մասը դուրս է վերջիններիս լիազորությունների շրջանակից, սակայն դրանց իրականացումը խիստ կարևոր նշանակություն ունի բնակչության բարեկեցությունը ապահովելու համար:

Աղյուսակ 6. Պարտադիր իրականացվող ծրագրերի ցանկ

Հ/հ	Բնակավայրի անվանումը	Ծրագրի անվանումը	Ծրագրի ընդհանուր արժեքը (հազ. դրամ)
		<i>ՏԻՄ-երի լիազորություններ</i>	
1	Լեռնակերտի համայնքապետարան	Կառավարման ապարատի պահպանում	97588.8, որից՝ 2016թ.՝ 18688.9 2017թ.՝ 19150.4 2018թ.՝ 19480.0 2019թ.՝ 19965.5 2020թ.՝ 20304.0
2	Լեռնակերտի համայնքապետարան	Համայնքի ՆՈՒՀ -ի պահպանում	41810,5 որից՝ 2016թ.՝ 7700.0

			2017թ.՝ 8000.0 2018թ.՝ 8330.5 2019թ.՝ 8680.0 2020թ.՝ 9100.0
3	Լեռնակերտի համայնքապետարան	Համայնքի մշակույթի տան պահպանում	5000.0, որից՝ 2016թ.՝ 0 2017թ.՝ 0 2018թ.՝ 0 2019թ.՝ 2500.0 2020թ.՝ 2500.0
4	Լեռնակերտի համայնքապետարան	Բնակչությանը սոցիալական օգնության տրամադրում	3620.0, որից՝ 2016թ.՝ 600.0 2017թ.՝ 650.0 2018թ.՝ 710.0 2019թ.՝ 800.0 2020թ.՝ 860.0
5	Լեռնակերտի համայնքապետարան	Աղբահավաքման աշխատանքների իրականացում (համայնքի ընդհանուր վարչական տարածքում)	9050.0, որից՝ 2016թ.՝ 250.0 2017թ.՝ 2800.0 2018թ.՝ 2000.0 2019թ.՝ 2000.0 2020թ.՝ 2000.0
6	Լեռնակերտի համայնքապետարան	Ծառայությունների և ապրանքների ձեռքբերում	28726.8, որից՝ 2016թ.՝ 5150.4 2017թ.՝ 5460.5 2018թ.՝ 5890.5 2019թ.՝ 6000.4 2020թ.՝ 6225.0

Աղյուսակ 7. ՀԶՀԾ-ում ընդգրկելու համար Լեռնակերտի ՀԱԽ-ի կողմից առաջարկվող ծրագրերի ցանկ

Հ/հ	Բնակավայրի անվանումը	Ծրագրի անվանումը	Ծրագրի ընդհանուր արժեքը (հազ. դրամ)
		ՏԻՄ-ի լիազորություններ	
1	Լեռնակերտ	Փողոցների գիշերային լուսավորության անցկացում	6000.0
2	Լեռնակերտ	Ներբնակավայրային ճանապարհների բարեկարգում /խճապատում/	2000.0
3	Լեռնակերտ	Մշակույթի տան շենք վերանորոգում և գույքի համալրում	88000.0
4	Լեռնակերտ	Դաշտեր տանող ճանապարհների բարեկարգում	1500.0
5	Լեռնակերտ	ՆՈՒՀ-ի շենքի վերանորոգում գազաֆիկացում և գույքի համալրում	8000.0
6	Լեռնակերտ	Աղբամանների տեղադրում, աղբահանության պատշաճ կազմակերպում	10000.0
7	Լեռնակերտ	Մեծահասակների խաղասենյակի վերանորոգում	1000,0
8	Լեռնակերտ	Նստարանների տեղադրում	500.0

<i>ՏԻՄ-ի լիազորություններից դուրս ծրագրեր</i>			
1	Լեռնակերտ	Լեռնակերտի միջնակարգ դպրոցի վերակառուցում	100000,0
2	Լեռնակերտ	Լեռնակերտի միջնակարգ դպրոցի գույքի համալրում	5000.0

Աղյուսակ 8 Պարտադիր իրականացվող ծրագրեր

Հ/հ	Բնակավայրի անվանումը	Ծրագրի անվանումը	Ծրագրի ընդհանուր արժեքը (հազ. դրամ)	Գնահատման չափանիշներ (0-10 բալ)				Ընդամենը (բալ)	Ծրագրի առաջնահերթությունը
				Շահատուների թիվ	Համայնքի կարողությունների հզորացում	Իրատեսականություն	Հրատարակվելու		
1	Լեռնակերտ համայնքապետարան	Կառավարման ապարատի պահպանում	80000,0	X	X	X	X	X	1
2	Լեռնակերտի համայնքապետարան	Համայնքի ՆՈՒՀ -ի պահպանում	29820,0	X	X	X	X	X	2
3	Լեռնակերտի համայնքապետարան	Բնակչությանը սոցիալական օգնության տրամադրում	3000,0	X	X	X	X	X	4
4	Լեռնակերտի համայնքապետարան,	Աղբահավաքման աշխատանքների իրականացում (համայնքի ընդհանուր վարչական տարածքում)	9000,0	X	X	X	X	X	5
5	Լեռնակերտի համայնքապետարան	Ծառայությունների և ապրանքների ձեռքբերում	26800,0	X	X	X	X	X	6

Աղյուսակ 10. Համայնքի ոլորտային ծրագրերի ամփոփագիր(Պարտադիր իրականացվող ծրագրերի ցանկ)

Հ/հ	Ծրագրի անվանումը	Չափի միավորը	Ծրագրի քանակական ծավալը	Ծրագրի արժեքը (հազ. դրամ)	Ծրագրի կատարումն ըստ տարիների					Ծրագրի ֆինանսավորման աղբյուրները		
					2016	2017	2018	2019	2020	Համայնքի բյուջե	Դոնոր կազմակերպություններ	Պետ. բյուջե, այլ
1	Կառավարման ապարատի պահպանում	աշխատող	9	80000,0	16000,0	16000,0	16000,0	16000,0	16000,0	80000,0	-	-
2	Համայնքի ՆՈՒՀ ի պահպանում	երեխա	30	29820,0	5964,0	5964,0	5964,0	5964,0	5964,0	29820,0	-	-
3	Բնակչությանը սոցիալական օգնության տրամադրում	ընտանիք	5-8	3000,0	600,0	550,0	600,0	600,0	650,0	3000,0	-	-
4	Աղբահավաքման աշխատանքների իրականացում (համայնքի ընդհանուր վարչական տարածքում)	խմ	4000	9000,0	1800,0	1800,0	1800,0	1800,0	1800,0	9000,0	-	-
5	Ծառայությունների և ապրանքների ձեռքբերում	Ծառայություններ, ապրանքներ	X	26800,0	4500,0	5000,0	5100,0	5400,0	6800,0	26800	-	-
Ընդամենը				148620,0	28864,0	29314,0	29464,0	29764,0	30914,0	148620,0	0.0	0.0

Աղյուսակ 11. Համայնքի ոլորտային ծրագրերի ամփոփագիր (Ըստ բնակավայրերի առաջնահերթություն շահած ծրագրերի ցանկ)

Հ/հ	Ծրագրի անվանումը	Իրականացման վայրը (բնակավայրը)	Հասկի միավորը	Ծրագրի բնականական ծավալը	Ծրագրի արժեքը (հազ. դրամ)	Ծրագրի կատարումն ըստ տարիների					Ծրագրի ֆինանսավորման աղբյուրները		
						2016	2017	2018	2019	2020	Համայնքի բյուջե	Դոնոր կազմակերպություններ	Պետ. բյուջե, այլ
1	Փողոցների գիշերային լուսավորության անցկացում	Լեռնակերտ	Հատ	60	6000.0	400.0	3000.0	2600.0	-	-	6000.0	-	-
2	Ներբնակավայրային ճանապարհների բարեկարգում /խճապատում/	Լեռնակերտ	X	X	2000.0	205.0	595.0	400.0	400.0	400.0	2000.0	-	-
3	Մշակույթի տան շենք վերանորոգում և գույքի համալրում	Լեռնակերտ	քմ	450	88000.0	-	-	-	-	-	-	88000.0	-
4	Դաշտեր տանող ճանապարհների բարեկարգում	Լեռնակերտ	X	X	1500.0	-	400.0	400.0	400.0	300.0	1500.0	-	--
5	ՆՈՒՀ-ի շենքի վերանորոգում, գազաֆիկացում և գույքի համալրում	Լեռնակերտ	X	X	8000.0	-	1500.0	1500.0	3000.0	2000.0	8000.0	-	-
6	Աղբամանների տեղադրում, աղբահանության պատշաճ կազմակերպում	Լեռնակերտ	X	X	10000.0	-	3500.0	2200.0	2300.0	2000.0	10000.0	-	-
7	Մեծահասակների խաղասենյակի վերանորոգում	Լեռնակերտ	X	X	1000.0	-	-	1000.0	-	-	1000.0	-	-

Համայնքում պարտադիր իրականացվող ծրագրերը (աշխատակազմի, մանկապարտեզի պահպանման և այլն) նախկին տարիներին մշտապես իրականացվել են և առաջիկայում ևս նույնությամբ իրականացվելու են: Դրանք համարվում են համայնքի ամենաառաջնահերթ ծրագրերը և ձևակերպվելու են համայնքի տարեկան բյուջեների շրջանակում համապատասխան ծախսային նախահաշիվներով: Այդ պատճառով ՀԶՀԾ-ում դրանց առանձին ձևակերպման անհրաժեշտությունը չկա:

**ՀԱՎԵԼՎԱԾ 1. ԼԵՌՆԱԿԵՐՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԻ
ԳՆԱՀԱՏՈՒՄ ԵՎ ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄ**

Հ/հ	Ցուցանիշներ	Չափիմ իավոր	2014թ. փաստ.	2015թ. փաստ.	2016թ. կանխ.	2017թ. կանխ.	2018թ. կանխ.	2019թ. կանխ.	2020թ. կանխ. .
1.	Համայնքի վարչական տարածքը	հա	3220.83	3220.83	3220.83	3220.83	3220.83	3220.83	3220.83
2.	Բնակչության թիվը	մարդ	1488	1500	1541	1545	1555	1561	1563
	Անհատական բնակելի տների թիվը	տուն	294	294	294	296	296	296	296
	Անհատական բնակելի տների մակերեսը	հազ.քմ	68249	68249	68249	68520	68520	68520	68520
6.	Ավտոտնակների թիվը	հատ	99	99	99	99	101	101	101
8.	Տեղափոխվող աղբի քանակը	տոննա	5	5	5	7	7	7	7
	Այդ թվում՝ բնակչությունից		5	5	5	7	7	7	7
10.	Մանիտարական մաքրման տարածքը	հա	80	80	80	80	80	80	80
13.	Միջբնակավայրային ճանապարհների երկարությունը	կմ	3	3	3	3	3	3	3
14.	Միջբնակավայրային փողոցների և ճանապարհների մակերեսը	հազ.քմ	18.0	18.0	18.0	18.0	18.0	18.0	18.0
15.	Ներբնակավայրային փողոցների և ճանապարհների երկարությունը	կմ	9.5	9.5	9.5	9.5	9.5	9.5	9.5
16.	Ներբնակավայրային փողոցների և ճանապարհների մակերեսը	հազ.քմ	47.5	47.5	47.5	47.5	47.5	47.5	47.5
17.	Առևտրի և ծառայությունների Օբյեկտների թիվը, այդ թվում՝	հատ	2	2	2	2	2	2	2
	առևտրի Օբյեկտներ	հատ	2	2	2	2	2	2	2
20.	Բնակարանի կարիքավոր ընտանիք. թիվը	ընտ.	5	5	5	5	5	5	5
21.	Բնակարանային պայմանների բարելավման կարիքավոր ընտանիքներ	- // -	189	189	189	189	189	189	189
22.	Նախադպրոցական հիմնարկների թիվը	հատ	1	1	1	1	1	1	1
	Երեխաների թիվը	մարդ	30	30	30	30	30	30	30
	Խմբերի թիվը	խումբ	1	1	1	1	1	1	1
23.	Հանրակրթական դպրոցների թիվը	հատ	1	1	1	1	1	1	1
	Աշակերտների թիվը	մարդ	197	197	197	197	197	197	197
27.	Ակումբների թիվը	հատ	1	1	1	1	1	1	1
29.	Պոլիկլինիկա-ամբուլատորիաների թիվը	հատ	1	1	1	1	1	1	1

